Տ. ԱՍՈՂԻԿ ԱԲԵՂԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(29 հոկտեմբերի, 2023 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ,
որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ»
(Ժամագիրք)։

Սիրելի՛ հավատացյալներ,

Քրիստոսից առաջ եւ Քրիստոսից հետո տասնյակ հազարավոր մարդիկ են խաչվել, բայց այդ խաչվածներից եւ ոչ մեկի խաչը մեզ համար սուրբ եւ կենդանարար, եւս առավել՝ փրկարար չի եղել։ Եւ մարդկության ողջ պատմության մեջ Աստծու Որդին, Ով դարձավ Մարդու Որդի, հազարավոր մարդկանց նման խաչին գամվեց, այդ մարդկանց պես թաղվեց, նրանց նման մնաց գերեզմանի մեջ, սակայն Նա չմնաց այնտեղ հավերժ։ Որպես Աստված Հիսուս հարություն առավ եւ Իր հարությամբ փոխեց մարդկային կյանքի ընթացքը՝ մարդկությանը վերադարձնելով այն, ինչից որ մենք զրկվել էինք։ Եւ որովհետեւ այս խաչին միեղեն Գամվածին մեր Սուրբ Եկեղեցին՝ Հայոց Եկեղեցին, անվարան դավանում եւ ասում է՝ Աստված է, այդ իսկ պատճառով այդ փայտե նշանը՝ խաչը, դարձավ Կենաց ծառ, դարձավ Նշան կենաց, դարձավ հրաշագործ։ Եւ Սուրբ Աստծու, Սուրբ եւ հզոր, Սուրբ եւ անմահ Քրիստոս Աստծու Սուրբ Եկեղեցին երկրպագեց այդ Սուրբ Նշանին, այդ Սուրբ Նշանի միջոցով հրաշքներ գործեց, այսօր էլ գործում է եւ գործելու է ցկատարած աշխարհի։

Ահա, սիրելինե՛ր, այս աստվածային Սուրբ Նշանը, այս Կենաց ծառը Քրիստոսի համբարձումից հետո մոռացության էր մատնվել։ Եւ ես հավատում եմ (ընթերցելով մեր Սուրբ Եկեղեցու հայրերի գրվածքներն ու մեկնությունները՝ այդ համոզմանն եմ հանգել), որ, արդարեւ, աստվածային նախախնամության շնորհիվ էր, որ այդ խաչը որոշ ժամանակ ծածկ-

վել էր, սքողվել, եւ միայն քրիստոնեության հաղթանակի արշալույսին պիտի բացվեր՝ որպես կյանքի աղբյուր բխելով ու ոռոգելով Սուրբ Եկեղեցին։ Իսկ, ահա, այդ ծածկված գանձը բացելու շնորհն աստվածային նախախնամությունը պարգեւում է մի ազնվական տիկնոջ, մի թագուհու, որ Կոստանդիանոս կայսեր մայրն էր։ Բոլորդ, վստահաբար, գիտեք այդ պատմությունը։ Հեղինե կայսրուհին 326/327 թվականին Երուսաղեմ է գալիս եւ փնտրում Տերունի խաչափայտը։ Որոնումներն ուղեկցվում են մեծ դժվարություններով, եւ ի վերջո մի մի հրեայի մատնացուցությամբ գտնվում են Գողգոթայի խաչերը։ Եւ, արդ, ինչպես հասկանալ, թե որն է Սուրբ Աստծու, Սուրբ եւ հզոր, Սուրբ եւ անմահ Քրիստոս Աստծու արյամբ կենագործված ու կենսավետ դարձած խաչափայտը։ Եւ, ինչպես այսօրվա տոնի՝ Գյուտ խաչի տոնի պատմությունն է վկայում, Մակարիոս եպիսկոպոսը՝ Երուսաղեմի պատրիարքը, աղոթք է անում եւ Սուրբ Աստծու զորությամբ հրաշքով բացահայտվում է քրիստոնեական Եկեղեցու համար, թե որն է Տերունի խաչափայտը։ Եւ այդ օրվանից ի վեր խաչափայտը դառնում է քրիստոնյաների համար ցանկալի ու տենչալի մի մասունք, նշխար եւ կենդանության աղբյուր։ Ուստի ժամանակի ընթացքին խաչափայտը սփռվում է քրիստոնեական ողջ աշխարհով մեկ։ Այս Սուրբ Նշանը բաժին է հասնում նաեւ մեզ՝ հայերիս, եւ տարվա ընթացքում՝ Սուրբ Խաչի տոներին եւ տարբեր առիթներով, Սուրբ Էջմիածնից, Հայոց Հայրապետի օրհնությամբ, կյանքի այդ աղբյուրը, այդ փոքրիկ մասը, տարվում է թեմեր ու եկեղեցիներ՝ ի մխիթարություն մեր Եկեղեցու զավակների։ Ինչպես որ այդ օրերին քրիստոնյաներն ու դարձ ապրած հեթանոսները, խռնվելով Սուրբ Խաչի առջեւ, խնդրում էին, որ Մակարիոս եպիսկոպոսը վեր բարձրացնի, որպեսզի բոլորը տեսնելով մխիթարվեն եւ իրենց հավատքի հպումով ստանան իրենց սրտի ակնկալիքը, այդպես էլ մենք՝ այսօրվա քրիստոնյաներս, մեր հայացքն ուղղում ենք Սուրբ Խաչին, մեր Սուրբ Եկեղեցու Սուրբ Սեղանների խաչերին, մեր տաճարների գմբեթները պսակած խաչերին, մեր երկրով մեկ սփռված գեղակերտ խաչքարերին եւ մեր հոգու աչքերով տեսնում ենք Քրիստոսին։ «... Երբ խաչ ես տեսնում, - վկայում է Սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետը,— իմացիր եւ հավատա, որ նրա վրա բազմած Քրիստոսին ես տեսնում»։

Այո, սիրելի հավատացյալներ, խաչը եւ Աստված նույնական են, ահա ինչու մենք՝ քրիստոնյաներս, խաչը պաշտում ենք, կրում ենք մեր պա-

բանոցներին, խաչի նշանն ենք դրոշմում մեր անձերին՝ այդ ամենի մեջ տեսնելով Հիսուս Քրիստոսին՝ Սուրբ Աստծուն, Սուրբ եւ հզոր, Սուրբ եւ անմահ Քրիստոս Աստծուն։ Քանզի Նա, իր արյունը հեղելով այս Սուրբ Նշանի վրա, այն մեզ տվեց որպես մխիթարություն, իբրեւ շնորհաց մի աղբյուր եւ հրաշագործ մի նշան, որ գոհացում պետք է տար մեր հոգու եւ մարմնի կարիքներին։

Սիրելի՛ հավատացյալներ, խաչը մեզ համար պաշտելի նշան է, խաչը մեզ համար արդարություն է, խաչը մեզ համար ճշմարտություն է, խաչը մեզ համար կյանք է եւ խաչը մեզ համար ճանապարհ է։ Այդ իսկ պատճառով մենք, Տիրոջ խոսքի համաձայն, յուրաքանչյուրս կրում ենք մեր խաչը, եւ այդ խաչը կրելով, փորձում ենք նմանվել մեր Փրկչին՝ գնալով մեր կյանքի Գողգոթայով՝ այն վստահությամբ ու հավատքով, որ Գողգոթային հաջորդելու է հարությունը։ Սակայն մենք՝ հայ քրիստոնյաներիս, վիճակված չէ կրել միայն մեր անձնական խաչը, քանզի մեկ այլ կոչում ունենք այս արեւի ներքո. մենք պետք է կրենք նաեւ մեր հավաքական անհատականության, մեր ազգային խաչը եւ երբեք ու երբեք չպիտի հրաժարվենք այդ սուրբ խաչից։ Որքան էլ այդ խաչը ծանր է, որքան էլ այդ խաչի ճանապարհը դժվարին է, նեղություններով ու փորձություններով լեցուն, մեզանից ամեն մեկը սուրբ պարտականություն ունի՝ այդ խաչը սիրով, խոնարհությամբ եւ պատվով կրելու։ Հավատացեք, որովհետեւ մեզանից յուրաքանչյուրից է կախված մեր ազգի խաչը մինչեւ հարության այդ լույս բարձունք տանելը։ Մեր հավատքով եւ մեր անձնազոհությամբ է մեր ազգի խաչը հասնելու հաղթական հարության բարձունքին։ Այս օրերին, անցնող ամիսներին, տարիներին մենք վերստին տառապանք կրեցինք, վերստին հարվածներ ստացանք եւ ծանր կորուստներ ունեցանք։ Եւ սակայն մենք մեր հոգու խորքում չտրտնջացինք, չընդվզեցինք, այլ փորձեցինք ընկղմվել մեր հոգու խորանների մեջ, այնտեղ ծունկի գալ, եւ Խաչյալ ու Հարուցյալ Աստծու հետ անկեղծ զրուցելով, հասկանալ, թե ինչո՞ւ այս ամենը տեղի ունեցավ։ Ի՞նչն է այս ամենի պատգամը մեզ, ո՞րտեղ ենք թերացել, որ այս ամենը եկավ մեզ վրա, եւ արդյո՞ք մենք ունենք ուժը՝ այդ ամենը հաղթահարելու եւ մեր հաղթանակը պատվով կնքելու։ Յուրաքանչյուրդ, հավանաբար, ձեր հոգում այս հարցի պատասխանները կարող եք գտնել։ Այս պահին ես իմ վկայությունն եմ բերում ձեզ՝ հավատալով Սուրբ Խաչի զորությանը, խաչի մեջ տեսնելով հաղթանակած եւ հարուցյալ Քրիստոսին՝ Սուրբ Աստծուն, Սուրբ եւ

հզոր, Սուրբ եւ անմահ մեր Տիրոջը։ Արդարեւ, հավատում եմ, որ մենք այս ամենը հաղթահարելու ենք, շտկելու ենք եւ ավելիով վերադարձնելու ենք։ Մեծ Հայաստանի տեսիլքն ունայնություն չէ, այլ իրականություն, եւ պայմանավորված է մեզանից յուրաքանչյուրով, թե մենք ինչպես կապրենք, ինչպես կգործենք, ինչպես կշենացնենք եւ կհզորացնենք մեր երկիրը։ Մանավանդ, որ մենք պարտք ունենք մեր մեծ եւ նահատակ նախնիների առջեւ, մենք պարտք ունենք նաեւ մերօրյա նահատակների առջեւ՝ Հայաստանն անսասան պահելու եւ Հայոց խաչը միշտ վեր պարզած պահելու, որպեսզի մեր թշնամին, լինի հոգեւոր կամ մարմնավոր, նյութական կամ աննյութական, այդ խաչի զորության եւ լույսի առջեւ ի չիք դառնա, խոնարհվի, ծնկի գա հաղթված։ Թող Սուրբ Խաչի զորությունը մեզ ապավեն ու պահապան լինի մեր կյանքի բոլոր օրերին։

Սիրելի՛ հավատացյալներ, այս պահին Հայոց Հայրապետի նախագահությամբ հոգեհանգստյան կարգ պիտի կատարվի՝ ի հիշատակ արցախյան վերջին ողբերգական դեպքերի ժամանակ մեր նահատակ, մահացած եղբայրների եւ քույրերի։ Աղոթենք միասին, որպեսզի Սուրբ Աստված Իր անհուն ողորմությունը տարածի նրանց վրա, երկնային Իր լուսեղեն հարկերում ընդունի նրանց եւ Իր աստվածային անսահման սիրով, որ ճառագում է նաեւ Իր Սուրբ Խաչից, արժանի դարձնի նրանց Երկնքի Արքայությանը. ամէն։